ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԿԿԿՂ ՄՄԵՂԸ-ԿՂՂ-23/Ա

Ք. Կիրովական
շրջան (քաղաք) համայնք

26.01.2023թ.
ամսաթիվ

Հեռահաղորդակցության Օպերատորը՝ «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ն, որը գործում է իր կանոնադրության և 2001թ. նոյեմբերի 19-ի N 315-1/Ջ լիցենզիայի հիման վրա, մի կողմից՝ ի դեմս գլխավոր տնօրեն Սխիթար Միրզոյանի, մյուս կողմից՝ Բաժանորդը՝

Հի Ֆինանսական Լուծումներ

(կազմակերպության անվանումը)

ի դեմս Գ. Մարգարյանի

(կազմակերպության անվանում և կազմակերպության կողմից լիազորված անձի անուն, ազգանուն, հայրանուն կամ քաղաքացու անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրի կամ սահմանված կարգով ձևակերպված անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալներ)

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Օպերատորը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Բաժանորդին մատուցել սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված ծառայություններ (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Բաժանորդը պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա դիմաց:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Բաժանորդն իրավունք ունի՝

2.1.1 Պահանջել օրենքով կամ այլ նորմատիվ ակտերով նախատեսված արտոնությունների և առավելությունների ապահովում:

2.1.2 Հեռախոսակապի օգտագործման միջոցով վարել հեռախոսային խոսակցություն և տեղեկատվության փոխանակում, փոխանցում:

2.1.3 Պահանջել հեռախոսակապի ծառայությունների վճարման վերահաշվարկ կամ այդ ծառայություններից օգտվելու համար հեռախոսակապի բացակայության ժամանակահատվածում դրամական միջոցների վերադարձ:

2.1.4 Օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում ներկայացնել բողոք:

2.1.5 Հրաժարվել պայմանագրով չնախատեսված ծառայությունների վճարումից:

2.2 Բաժանորդը պարտավոր է՝

2.2.1 Տեղական, միջքաղաքային և միջազգային հեռախոսակապի, հեռախոսով տրված հեռագրերի ծառայությունների և հեռահաղորդակցության այլ ծառայությունների համար, որոնք կատարվում են Բաժանորդին պատկանող բաժանորդային սարքավորումների օգնությամբ, վճարումներ կատարել լրիվ ծավալով և պայմանագրում նշված ժամկետներում, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 2.2.3 կետով նախատեսված վճարը:

2.2.2 Բաժանորդային գիծը և իր տարածքում ունեցած բաժանորդային սարքավորումները պահպանել սարքին վիճակում:

2.2.3 Նախքան պայմանագրի լուծումը բաժանորդային համարի վերականգնման համար լրիվ մարել պարտքը և մուծել յուրաքանչյուր հեռախոսահամարի անջատված ամիսների բաժանորդավճարը ու յուրաքանչյուր հեռախոսահամարի վերականգնման վարձը՝ հաստատված սակագներով:

2.2.4 Բացառել ինքնուրույն որևէ աշխատանքի կատարումը, կապված բաժանորդային սարքավորումների և հեռախոսային գծերի հետ:

2.3 Օպերատորն իրավունք ունի՝

2.3.1 Ժամկետանց պարտքի դիմաց ժամանակավոր անջատել Բաժանորդի համապատասխան հեռախոսահամարը:

2.3.2 Հեռախոսի ժամանակավոր անջատման առավելագույն ժամկետը լրանալուց հետո (3 ամիս) Օպերատորը վերջնականապես դադարեցնում է սույն պայմանագրի գործողությունը, իսկ Բաժանորդը կարող է նորից հեռախոսահամար ստանալ ընդհանուր հիմունքներով:

2.4 Օպերատորը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրով սահմանված պայմաններով Բաժանորդին մատուցել հեռախոսակապից օգտվելու հնարավորություն, օգտագործելով հատկացված բաժանորդային համարը:

2.4.2 Կայանային վնասվածքի դեպքում 24 ժամվա ընթացքում ապահովել հեռախոսակապի կայուն և որակյալ աշխատանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Բաժանորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված հեռահաղորդակցության ծառայությունների դիմաց վճարումները Բաժանորդը իրականացնում է հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

3.2 Սույն պայմանագրով Օպերատորի մատուցած Ծառայության յուրաքանչյուր միավորի գինը, ներառյալ ԱԱՀ-ն, ներկայացված է սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածում: Գինը ներառում է Օպերատորի

կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

3.3 Բաժանորդը իրեն մատուցած հեռախոսակապի Ծառայությունների դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Օպերատորի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

4.1 Օպերատորը Ծառայությունը մատուցում է Բաժանորդին պայմանագրում նշված ծավալներով, ձևով և ժամկետներում:

4.1.1 Օպերատորը՝ Պայմանագրով նախատեսված՝ Ծառայության մատուցման փուլի ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում Բաժանորդին է ներկայացնում մատուցած Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

4.2 Բաժանորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Օպերատորին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը :

4.3 Ծառայությունը Բաժանորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու օրվանից:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Օպերատորը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման որակի և սույն պայմանագրի նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Բաժանորդի կողմից սույն պայմանագրի 3.1 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Օպերատորը անջատում է Բաժանորդի բոլոր հեռախոսները:

5.3 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրի պայմանները կիրառվում են կողմերի միջև 01.01.2023թ-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև պայմանագրի կնքումը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում: Ծառայության մատուցումը կիրականացվի մինչև 25.12.2023թ.: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը, որի վերաբերյալ Բաժանորդը 20 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է Օպերատորին:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Օպերատորը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում գործող օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Բաժանորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին գործող օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Բաժանորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Օպերատորի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Բաժանորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Բաժանորդի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտա-վորու-թյունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ծեռք բերել նախքան գործող օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ծեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Բաժանորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Օպերատոր կամ Բաժանորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Օպերատորի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Օպերատորը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9. Ստորագրելով սույն Պայմանագիրը Բաժանորդը տալիս է իր թույլտվությունը վավերապայմանների մեջ իր կողմից ներկայացված էլեկտրոնային փոստին ստանալ էլեկտրոնային նամակներ Օպերատորից՝ վերջինիս գործունեությունը լուսաբանող տեղեկություններով, ներառյալ նորություններ, գովազդային նյութեր, ծանուցումներ և/կամ առաջարկներ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օպերատոր	Բաժանորդ
«Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ	Հի Գ.Ալեքսանյան Լուսինե
ՀՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սամիկոնյանի, 23	Հ.Հ. Գ.Գրիգորի, Հասմիկ Գրիգորյան ԱԵՁ
«Արցախբանկ» ՓԲԸ h/h 22300231521400	Հ.Հ. ՀՀ ստեփանակերտ
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ h/h 11500444444000	գարեգինի փողոց,
«Արարատբանկ» ԲԲԸ h/h 1510033128175300	էլեկտրոնային հասցե
«Կոնվերսբանկ» ՓԲԸ h/h 1930006070470200	h/h 90001100028341
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ h/h 163244444002	
ՀՎՀՀ / TIN: 90015278	
www.kt.am,	
097-200-111, 111	
ստորագրություն	ստորագրություն

Հավելված N 2
26.01.2023 -ի
N պայմանագրի
հհ ՔԿ ...-1112
23/2

ՑԱՆԿ
«Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ ավտոմատ միջքաղաքային և միջազգային հեռախոսակայանի կարգավիճակների

Բաժանորդի հեռախոսա-համարը	Հեռախոսա-համարի տեղադրման հասցեն	Միջքաղաքային միացում ԼՂՀ տարածքում		Միջքաղաքային միացում դեպի ՀՀ		Միջքաղաքային միացում դեպի ԱՊՀ և արտասահմանյան երկրներ	
		հեռախոսավարի /օպերատորի/ միջոցով	ավտոմատ միացման /կոդի/ միջոցով	հեռախոսավարի /օպերատորի/ միջոցով	ավտոմատ միացման /կոդի/ միջոցով	հեռախոսավարի /օպերատորի/ միջոցով	ավտոմատ միացման /կոդի/ միջոցով
952269	Ստեփանակերտ						✓
952507	Մեխակավան 1						✓
942832							✓
978710					✓		
978711					✓		
	Մարտակերտ						
47421967							✓
47421527	5 կմ						
47421529					✓		
	Մարտունի						
47821976							✓

ԲԱԺԱՆՈՐԴ

Կ.Տ

ՕՊԵՐԱՏՈՐ
«Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ

Կ.Տ

Հավելված N 1
26.01.2023 ի
N ՀՀ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-ՆԳԶ-23/2 պայմանագրի

ՀԱՇՎԱՐԿ

20*23* թ. հունվարի 1-ից մինչև 20__ թ. դեկտեմբերի 31-ը՝ ներառյալ

/դրամ/

	Ծառայության անվանումը	Մեկ միավորի ամսական սակագին ԱԱՀ հետ	Քանակը (հատ)	Ծառայության արժեքը պայմանագրային ժամանակահատվածում ԱԱՀ հետ	Այդ թվում ԱԱՀ
1	Հիմնական բաժանորդահամարով հաստատուն գծերի համար բաժանորդավճար՝	1200	*9*		
2	Զուգահեռ բաժանորդահամարով հաստատուն գծերի համար բաժանորդավճար՝	260			
3	Կիլոմետրային վարձ	360			
4	Միջքաղաքային կապուղու վարձակալում				
4.1	0-100 կմ՝ անալոգային	26250	*5*		
4.2	0-100՝ թվային	50000			
4.3	100 կմ-ից ավելի՝ անալոգային	35000			
4.4	100 կմ-ից ավելի՝ թվային	70000			
5	Հեռախոսացանցի ֆիզիկական շղթայագծերի վարձակալության տրամադրում	1 200			
6	Բաժանորդին հեռահաղորդակցության օպերատորի հետ ուղիղ կապի տրամադրում	1 200	*3*		
7	Գերատեսչական հեռախոսակայանի միացնող գծի տրամադրում, որը ելք ունի դեպի օպերատորի հեռախոսացանց	5000			
8	Զանգահարողի հեռախոսահամարի ներկայացում	300			
9	Ինքնորոշման արգելափակում	500			
	Ընդամենը				

ԲԱԺԱՆՈՐԴ	ՕՊԵՐԱՏՈՐ «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3
26.01.2023 -ի
N պայմանագրի

Բաժանորդ

Օպերատոր

«Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ
հասցե ք.Ստեփանակերտ, Վ. Սամիկոնյանի, 23
«Արցախբանկ» ՓԲԸ h/h՝ 22300231521400
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ h/h՝ 11500444444000
«Արարատբանկ» ԲԲԸ h/h՝ 1510033128175300
«Կոնվերսբանկ» ՓԲԸ h/h՝ 1930006070470200
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ h/h՝ 163244444002
ՀՎՀՀ 900015278

հասցե

ՀՀ

ՀՎՀՀ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___
ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

«__» _____ 20__ թ.

Պայմանագրի անվանումը՝ ՀԵՌԱԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__» _____ 20__ թ.
Պայմանագրի համարը՝
Բաժանորդն, ի դեմս _____ և Օպերատորն՝ ի դեմս _____
կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Օպերատորը «__» _____ 20__ թ-ից «__» _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ ծառայությունները

Ծառայության համառոտ նկարագիրը	Ծառայության քանակական ցուցանիշները	Ծառայության ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ ծառայությունների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը մատուցեց

_____
(ստորագրություն)

ազգանուն _____

Կ.Տ

«Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ

_____

Ծառայությունն ընդունեց

_____
(ստորագրություն)

ազգանուն _____

Կ.Տ

_____

Կ.Տ